ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » նոյեմբեր 2016 թվականի թիվ 21

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետով .

համայնքի ավագանին որոշում է .

հաստատել Դվին համայնքի 15 նոյեմբերի 2016 թվականի թիվ 8-րդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Կ.Դավթյան			
Խ.Գրիգորյան			
Գ.Կիրակոսյան			
Ա.Գրիգորյան			
Վ.Դերմոյան			
Գ.Բարեղամյան			

Համայնքի ղեկավար՝ *Ա.Աբրահամյան*

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Դվին համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 15-ի
թիվ 21 որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 8-ՐԴ ՆԻՍՏԻ

. ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 2017-2020 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկ. ՝Ա. Աբրահամյանը

. ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՝Ա. Աբրահամյանը

. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ , ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՝Ա. Աբրահամյանը

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » նոյեմբեր 2016 թվականի թիվ 22-Ն

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 2017-2020 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով

համայնքի ավագանին որոշում է.

հաստատել Դվին համայնքի 2017-2020 թթ. զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի :

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Կ.Դավթյան			
Խ.Գրիգորյան			
Գ.Կիրակոսյան			
Ա.Գրիգորյան			
Վ.Դերմոյան			
Գ.Բարեղամյան			

Համայնքի ղեկավար՝ *Ա.Աբրահամյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու՝ 15.11.2016 թ. թիվ 22-Ն որոշմամբ

ԴՎԻՆ 2016թ.

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:
Գալիք տարիների համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնել սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման աշխատանքներ:
- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

Համայնքի ռազմավարական պլանը մշակվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից, բնակիչների, ավագանու անդամների և այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ: Որով սահմանվում է համայնքի ֆինանսական կառավարման հիմնական քաղաքականությունը գալիք 4 տարիների համար: Այն կդառնա ուղեցույց համայնքային ծառայությունների մակարդակի և որակի պահպանման, խթանման և բարձրացման համար:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 *ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ*

Հայ և օտարազգի պատմիչների մոտ Դվին անունը հանդիպում ենք *ԴՈՒՎԻՆ, ԴՈՒԻՆ, ԴՈՒՎԻԼ,ԴԱԲԻԼ* ձևերով: Ըստ պատմաբանների անունը ծագել է արաբերեն *ԴԱԲԻԼ՝* բլուր բառից: Դվինը, որպես հնագույն բնակավայր, հայտնի է մ.թ.ա 5-րդ հազարամյակից: Որպես քաղաք այն հայտնի է Քրիստոսի ծննդից առաջ: Այդ է վկայում հայ և օտարազգի պատմիչների վկայությունները, այդ են վկայում պեղածո հնագիտական հարուստ նյութերը: Պատմությունից հայտն է ,որ Խոսրով Կոտակ Արշակունին /330-338թթ/ իր թագավորության 2-րդ դարում մայրաքաղաքը Արտաշատից տեղափոխեց Դվին,բայց ոչ նոր քաղաք հիմանդրեց: Ձենոբ Ասորին գրում է,որ 301 թվականին Գրիգոր Լուսավորիչը իրեն կարգել է Ոստան-Դվին քաղաքի եպիսկոպոս, ապա նշում է , որ Դվինի եպիսկոպոսությունը իր մեծությամբ Հայաստանում երկրորդն էր: Այդ փաստը ևս խոսում է այդ ժամանակվա՝ Դվինի կայացած քաղաք լինելու մասին: Դվինն էլ ավելի ընդարձակվեց , ծաղկում ու զարգացում ապրեց Արշակունի արքաների գահակալության տարիներին: Ձեռամբ Խոսրով Կոտակի հիմնադրվեց արքայական պալատը՝ իր բաղկացուցիչ մասերով, եկեղեցական համալիրը և բազմաթիվ այլ շինություններ: Իր պատմության ընթացքում Դվինը ունեցել է տարբեր վարչական դեր, նշանակություն, ինչպես նաև տարբեր վարչական պատկանելիություններ: Իր ծաղկման ժամանակաշրջանում Դվինում զարգացած են եղել արհեստները, արվեստները, քաղաքաշինությունը, առևտուրը: Դվինը նաև աշխարհի չորս խաչմերուկում գտնվող խոշոր առևտրական հանգույց էր: Ըստ մեծանուն պատմաբան, հնագետ Կարո Ղափլանյանի, Դվինը միջնադարում աշխարհի ամենամեծ քաղաքն էր, ուներ 100000 բնակիչ՝ հայեր, ասորիներ, արաբներ, հրեաներ ու բոլորն էլ՝ հայախոս:

Քաղաքում կատարելագործության .գագաթնակետին էին հասել ոսկերչությունը,ապակեգործությունը, խեցեգործությունը, գրչարվեստը: Դվինը աշխարհի քրիստոնեության պատմությանը հայտնի է նաև իր հոգևոր ժողովներով, որոնք անշուշտ հանգուցային, ճակատագրական դեր են ապահովել մեր ժողովրդի հետագա հոգևոր անկախության և քրիստոնյա մնալու կարևորագույն հարցերում: Մենք՝ դվինցիներս, հպարտությամբ ենք նշում այ փաստը, որ Դվինը հայոց հոգևոր գահին տվել է երկու կաթողիկոս՝ Հովաբ Դվնեցի և Ստեփանոս Դվնեցի:

Դվինը մեծապես տուժեց 893 թվականի ավերիչ երկրաշարժից: Դրանից հետո քաղաքը նորից վերականգնվեց, բայց դեռ երկար ժամանակ զգացվում էր երկրաշարժի հետքերը: Միջնադարում քաղաքն այնքան էր ընդարձակվել, որ նրա արվարձանները հյուսիս-հարավ ուղղությամբ սկսվում էին ներկայիս Այգեզարդ գյուղից և հասնում մինչև Ազատ գետի ափերը, արևելք-արևմուտք ուղղությամբ սկսում էին Կանաչուտ գյուղից և հասնում մինչև Գեղամա լեռների փեշերը: Դվինը հասել էր իր փառքի գագաթնակետին , երբ 1225 թ. ավերիչ, արյունարբու Ձալալ էդ Դինի սև ձեռքը հասավ նրան : Քաղաքը դաժան թալանի և ավերածության ենթարկվեց: Երբեմնի շեն ու շքեղ գեղեցկուհին վերածվեց ավերակների կույտերի: Այլևս անհնար էր շարունակել ապրել քաղաքում: Սկսվեց ժողովրդի մեծ տեղափոխություն, քաղաքն ամայացավ իսպառ: Տիրեց լռության երկար ժամանակահատված: Դվինի մասին լռում էր պատմությունը, լռում էր մարդկային հիշողությունը: Այդ մեծ լռությունը խախտվեց, երբ 16-18–րդ դարերի եվրոպացի ճանապարհորդները դեպի արևելք ճանապահորդեիս՝ պատահմամբ եղան Դվինում և նրա գոյության մասին թողեցին կցկտուր տեղեկություններ: Նրանցից մեկը նկարագրելով Դվին համանուն գյուղը, պատմում է , որ բնակիչները շատ հյուրասեր էին, որ ինքը անձամբ գիշերել է Դվինում:

1828 թվական վերադարձի 10, Խուդաբաշի պայմանագրի, Արևելյան Հայաստանի միացումից հետո: Գրիբոյեդովի եռանդուն ջանքերի շնորհիվ 30000 հայեր Պարսկաստանից կամ Նորշիրավան նահանգից ներգաղթեցին Արևելյան Հայաստան: Նրանք բնակություն հաստատեցին ներկայիս Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Վայոց-Ձորի,Սյունիքի մարզերում, Արցախում. իսկ մյուս ճյուղը՝ մեծ խումբ, ասորիների հետ, շարժվեցին դեպի Հյուսիսային Կովկաս: Պատմությունը գրում է, որ Արարատյան դաշտի բազմաթիվ բնակավայրերի պես , Դվինն էլ է 1828 թվականին է հիմնադրվել, սակայն մենք չգիտենք, արդյո՞ք հիմնադրման պահին գյուղն ուներ բնիկներ, եթե կային, ապա ովքե՞ր են նրանք , այսօրվա Դվինի ո՞ր տոհմերն են ներկայացնում:

Հիմնադրումից 12 տարի անց, ահեղ երկրաշարշից հետո,դվինցիք Ակոռի Սուրբ Հակոբ ավերակված եկեղեցուց մասունքներ են բերում և գյուղում նույնանուն մատուռ հիմնում, որի տեղում 1885 թվականին կառուցվում է Սուրբ Հակոբ եկեղեցին: Վերջինս կանգուն է մինչ այսօր և իր պատերի մեջ ամփոփում է վերոնշյալ մասունքները:

Առաջին հանրապետության տարիներին գյուղն ուներ շուրջ 100 տնտեսություն, հիմնական զբաղմունքն էր՝ հողագործությունն ու անասնապահությունը: 1941 թվականին ուներ ավելի քան երեք հարյուր տնտեսություն :

Գյուղը գտնվում է Արտաշատ մարզկենտրոնից գտնվում է 12 կմ հեռավորության վրա՝ հյուսիս-արևելք ուղղությամբ: Ծովի մակերևույթից բարձր է 920 մ.: Օդի ամենաբարձր ջերմաստիճանը հասնում է 35-ից 38 աստիճանի, իսկ ամենացածրը՝ 20-ից 25 աստիճան: Տեղումների քանակը՝ ըստ տարեկան նորմայի:

Գյուղում պահպանված պատմությունները հավաստում են, որ Դվինը հիմնադրել են Խոյի,Սալմաստի և Ուրմիայի շրջաններից տեղափոխված յոթ տոհմեր: 1915-1938 թթ. գյուղը համալրվել է Արևմտյան Հայաստանի Վասպուրականի, Բիթլիսի,Մոկսի նահանգներից մազապուրծ փրկված ընտանիքներով:

1988-1990 թթ. գյուղում վերաբնակեցվել են Ադրբեջանից ներգաղթված 14 ընտանիքներ:

Համայնքում առկա են երկու մշակույթի տուն ,մեկ բուժ. ամբուլատորիա, մեկ մանկապարտեզ :

Մշակույթի տունը կառուցվել է 1938-48 թթ: Թե ովքե՞ր են եղել շինության ճարտարապետները,շինարարները, այդ մասին ցավոք ոչինչ չգիտենք, բայց ակնհայտ է , որ շենքը կառուցված է Թամանյանական ոճով: Շենքը երկհարկանի է: Հայկական ավանդական ճարտարապետության հիմունքներով է կառուցված: Տուֆակերտ է, արտաքնապես շատ գեղեցիկ: Առաջին հարկում ունի 420 տեղանոց դահլիճ, մեծ բեմ՝ հինգ փորձասենյակներով, ընդհարձակ ճեմասրահ: Երկրոդ հարկում է գտնվում գյուղի գրադարանը, ընթերցասրահները,կինոօպերատորի խցիկը՝ կից երեք սենյակներով:

2000-2016 թթ. իրականացվել են համայնքային նշանակության հետևյալ ծրագրերը.

- Հիմնանորոգվել է Մշակույթի տան, եկեղեցու, դպրոցի տանիքները:
- Հիմնանորոգվել է համայնքի մանկապարտեզը, համայնքապետարանի շենքը
- Անցկացվել է գազատար, փոխվել և հիմնանորոգվել են ոռոգման և խմելու ջրագծեր, վերանորոգել և խճապատվել են համայնքային նշանակության փողոցներ:

Գյուղում արտադրվում են Արարատյան դաշտի կլիմային բնորոշ բոլոր տեսակի մրգերն ու բանջարեղենները:

Համայնքում գյուղմթերքի վերամշակման կազմակերպություններ չկան: Համայնքի բնակիչները այն իրացնում են հանրապետության շուկաներում և մթերման կետերում: Գյուղմթերքի իրացման գործը հեշտացնելու համար առաջարկում ենք տեղերում ստեղծել փոքրամասշտաբ մթերման կայաններ:

Ոռոգման համակարգը վիճակը բավարար է, ջրի մատակարարումը ոչ բավարար:

Համայնքում գործում են Դվին-Արտաշատ, Դվին-Երևան երթուղային տաքսիներ և ավտոբուսներ,ինչպես նաև հասանելի է հեռախոսային կապի բոլոր օպերատորների ծառայությունները:

Կրոնում է սկսել է բանասեր Հուբեն Հովհաննիսի, Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ֆրունզե Կարապետյանը, գիտությունների թեկնածու, դոցենտ Ֆրունզ Ավետիսյանը:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքում փաստացի հաշվառված բնակչությանը թիվը՝ 3270 մարդ, առկա բնակչության թիվը կազմում է 2901 մարդ:

Համայնքի բնակչությունը

	Տարիքային խմբեր	Ընդամենը	Արական	Իգական
1	0-18 տարեկան	589	288	301
2	18-22 տարեկան	158	62	96
3	23-45 տարեկան	1082	536	546
4	46-62 տարեկան	763	370	393
5	63 տարեկանից ավել	309	130	179
	Ընդամենը	2901	1386	1515

Բնակչության սոցիալական կազմը

Սոցիալական կազմը	Քանակը
Կանայք	1515
Տղամարդիկ	1386
Թոշակառուներ	309
Փախստականներ	39
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	16
Հաշմանդամներ	135
Տնային տնտեսությունների թիվը	806
Փարոս՝ ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	92

Կրթություն	Քանակ
Բարձրագույն կրթություն	285
Միջին մասնագիտական կրթություն	298
Միջնակարգ կրթություն	1385
Տարրական	92

Դվին համայնքում առկա են մոտ 1910 զբաղված քաղաքացիներ, որից ըստ տնտեսական ճյուղերի՝

Տնտեսական ոլորտ	Քանակ
Մշակող արդյունաբերություն. այդ թվում գյուղատնտեսական հումք մշակող	4
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն	13

և բաշխում	
Շինարարություն	150
Տրանսպորտի և կապի բնագավառ	4
Բնակարանային կոմունալ տնտեսություն, բնակչության կենցաղսպասարկման ոչ արտադրական տեսակների բնագավառ	0
Առողջապահության ոլորտ	5
Առևտրի և հանրային սննդի բնագավառ	10
Կրթության, մշակույթի և արվեստի բնագավառ	43
Գյուղատնտեսական ծառայություններ	1610
Հյուրանոցներ. ռեստորաններ	0
Այլ ճյուղեր	71

1.2 *ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ*

2016թ. ապրիլի 17-ին Դվին համայնքում կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ընտրվեց համայնքի ղեկավար: Համայնքի ավագանին ընտրվել՝ 2015 թվականի հունիսի 7-ին: Ավագանին բաղկացած է 8 անդամներից: Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը ներկայացված է թիվ 1 հավելվածով :

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքների թիվը հետևյալն է՝

Համայնքի ղեկավարի աշխատակազմ - 13

Դվին համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ - 14

1.3 *ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Դվին համայնքում գրանցված ձեռնարկությունները և անհատ ձեռնարկատերերը ըստ գործունեության ոլորտների

Գործունեություն	Իրավաբանական անձիք, Ձեռնարկություններ	Անհատ ձեռնարկատերեր
Առևտուր, մեքենաների, կենցաղային սարքավորումների նորոգում	0	13
Ընդամենը	0	13

Համայնքում առկա է ըմպելիքի, հացի թխման արտադրամաս: Համայնքի բնակչությունն ըստ զբաղվածության բաժանվում է մի քանի խմբի՝ մանր և միջին առևտրով զբաղվողներ, պետական և տեղական ինքնակառավարման կառուցվածքներում աշխատողներ, գործազուրկներ, սեզոնային շինարարություններում աշխատողներ,գյուղատնտեսությամբ զբաղվողներ, սպասարկման ոլորտում աշխատողներ:

1.4 *ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ*

Համայնքում բազմաբնակարան շենքեր առկա չեն:

Համայնքում առկա են 600-ից ավել առանձնատներ:

1.5 *ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ*

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 9737.08 հա, այդ թվում՝

Հողերի տեսակը	Միավորը /հա/
բնակավայրերի փաստացի սահմաններում ընդգրկված	139.25
արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության	4.414
էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ .ենթակառուցվածքների	3.72
հատուկ պահպանվող տարածքների	1097.88
հատուկ նշանակության	0
գյուղատնտեսական նշանակության	8476.986
անտառային /ազգային պարկ/	0
Ջրային	34.83

1.6 *ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Բնակչության 60-70 %-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ:
Գյուղատնտեսական նշանակության հողերը բաշխված են հետևյալ կերպ՝.

Տեսակ հա

1. Վարելահող - 184.94
2. Բազմ.տնկարկներ - 281.456
3. Խոտհարքներ - 0
4. Արոտ - 6373.33
5. Այլ հողատեսք - 1637.26

Գտնվելով բարենպաստ կլիմայական պայմաններում, հողերի մեծ մասը ոռոգվում են, բնականից հարուստ են հումուսով:

Բերքատվությունը բարձր է՝ բարենպաստ կլիմայական գործոնների պատճառով:
Համայնքում տնտեսությունները հիմնականում զբաղվում են բոլոր տեսակի գյուղատնտեսական մթերքների /լոլիկ,կարտոֆիլ,պղպեղ,սմբուկ,վարունգ և այլն / արտադրությամբ և անասնապահությամբ: Համայնքում առկա է շուրջ 110 ջերմոցային տնտեսություն: Ոռոգման ջրի բացակայության պատճառով համայնքում առկա 98 հա վարելահողերը չեն մշակվում:

Անասնաբուծության հիմնական ճյուղը խոշոր եղջերավորներն են՝ 301 գլուխ, որից կովեր 146 գլուխ, արտադրող ցուլեր -120 գլուխ, երինջներ - 35 : Խոզեր – 61, ոչխարներ – 310, ձիեր – 5: Գյուղում տարածված է նաև մեղվապահությունը՝ 140 մեղվաընտանիք, թռչունների թիվը՝ 2047

1.7 *ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ*

Դվին համայնքի օդի աղտոտվածությունը չի գերազանցում նորմատիվային մակարդակը, սակայն համայնքը կարիք ունի կանաչ տարածքների ավելացման:

1.8 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Դվին համայնքն ունի համայնքային ենթակայության 461.4 հազ. քառ. մետր մակերեսով փողոցներ և ճանապարհներ, որոնք ամբողջությամբ բնահողային են կարիք ունեն վերանորոգման: 2010 թվականին համայնքում առկա միջհամայնքային ճանապարհը /Արշակունյաց փողոց/ ամբողջովին ասֆալտապատվել է պետական միջոցների հաշվին:

Համայնքի փողոցներում կատարվել է փողոցային լուսավորության ցանցի վերակառուցման աշխատանքներ:

Յուրաքանչյուր տարի խնամքի ենթարկվում են համայնքի առավել բարուկ վիճակում գտնվող տները:

Համայնք գազաֆիկացված է 90 %-ով:

Աշխատանքներ են իրականացվել աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման ուղղությամբ:

Ջրամատակարարման ներքին ցանցը կազմում է 13068 գծ/մ խողովակաշար:

Համայնքում բացակայում է կոյուղու համակարգը:

1.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տվյալներ կրթական օջախների վերաբերյալ

Կրթական օջախներ	Քանակը	Սովորողների թիվը	Աշխատողների թիվը
Միջնակարգ, հանրակրթական դպրոց	1	320	45

Տվյալներ նախադպրոցական կազմակերպությունների մասին.

Կազմակերպության անվանումը	Երեխաների թիվը	Աշխատողների թիվը
Դվին համայնքի մանկապարտեզ՝ ՀՈԱԿ	65	14

Դվին համայնքում գործող համայնքային ենթակայության նախադպրոցական ոչ առևտրային կազմակերպությունը տեղավորված է տիպային շենքում: Մանկապարտեզը ունի լոկալ ջեռուցման համակարգ:

Մշակույթի տանը գործում է պարի խմբակ: Սփյուռքահայ բարերարների և համայնքի բյուջեի միջոցներով մասնակի վերանորոգվել է համայնքի Մշակույթի տունը: Համայնքի միջոցներով մանկապարտեզի համար ձեռք է բերվել գույք՝ մահճակալներ, սեղաններ, աթոռներ: Մանկապարտեզում տեղադրվել են կարուսելներ:

Յուրաքանչյուր ուսումնական տարի անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարը ապահովում է համայնքապետարանը:

1.10 ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքն ունի երկու մշակույթի տուն, որոնք մասնակի վերանորոգված են:

Մշակույթի տան հարակից այգում առկա է մանկական փոքրիկ խաղահրապարակ, այն կարիք ունի կանաչապատման և նորոգման:

Համայնքի գրադարանը գտնվում է մշակույթի տան շենքում, ունի 7940 անուն գիրք:

Յուրաքանչյուր տարի կազմակերպվում են երեխաների պաշտպանության,անկախության, մայիսյան հաղթանակների օրվան նվիրված միջոցառումներ: Դվին համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների ավագ նախադպրոցական խմբեր հաճախող թվով 35 երեխաների ավարտական հանդեսի միջոցառման համար յուրաքանչյուր տարի տրվում են նվերներ:

Համայնքում գործում են երկու եկեղեցիներ՝ Սուրբ Հակոբ և Սուրբ Հարություն :

Հուշարձաններից հարկ է նշել համայնքի բնակիչների միջոցներով Մշակույթի տան հարակից բակում կառուցված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը, ինչպես նաև հայրենական մեծ պատերազմի և դարաբաղյան պատերազմի մասնակիցներին նվիրված հուշարձանը:

1.11 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1. Գազաֆիկացված համայնք
2. Համերաշխ և հյուրասեր բնակչություն
3. Բնակչության վստահությունը Տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ
4. Բարենպաստ կլիմայական պայմաններ
5. Մատչելի աշխատուժի առկայություն
6. Գյուղատնտեսական նշանակության հողերի առկայություն

1.12 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1. Գործազրկության բարձր մակարդակ
2. Երիտասարդության աշխատանքային և ժամանցային վայրերի բացակայություն
3. Երիտասարդների հոսք
4. Վերապատրաստված մասնագետների բացակաություն
5. Տեղեկատվության տարածման մեխանիզմների բացակայություն
6. Ճանապարհների անբարեկարգ վիճակ
7. Բնակչության անվճարունակություն
8. Ոռոգման ջրի անբավարար վիճակ
9. Խմելու ջրի անբավարար մատակարարում
10. Գյուղատնտեսական տեխնիկայի բացակայություն

1.13 ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համագործակցության շրջանակների ընդլայնում
2. Տնտեսական կյանքի աշխուժացում
3. Կրթական պոտենցիալ
4. Աշխատուժի առկայություն
5. Կառավարության տրամադրվածությունը համայնքի զարգացման նկատմամբ
6. Նոր աշխատատեղերի ստեղծում
7. Արտերկրից տրանսֆերտների կայուն հոսք
8. Աղբի վերամշակման ծրագիր

1.14 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գործազրկության մակարդակի աճ
2. Հարկային պարտավորությունների կատարման վատ վիճակ
3. Բնակֆոնդի վիճակի վատթարացում
4. Աշխատատեղերի պակաս
5. Եկամուտների անկայունություն
6. Բնակչության արտահոսք
7. Աղբի վերամշակման բացակայություն
8. Կանաչապատում
9. Խմելու ջրի վատ մատակարարման պատճառով հիվանդությունների աճ

2. <u>ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</u>

Համայնքի առաքելությունն է որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը և ապահովել համայնքի բնականոն զարգացումը:
Համայնքի ռազմավարական նպատակն է՝ բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով ապահովել համայնքի կայուն զարգացումը:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են

1. *Դվին համայնքի տարածքային համաչափ,կայուն զարգացումը և պլանավորումը:*
2. *Բնակչության կենսական շահերի ապահովում :*
3. *Բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովում համայնքի բնակիչների և երեխաների համար :*
4. *Կանաչ տարածքների կառուցում, երեխաների հանգստի գոտիների ստեղծում:*
5. *Բնակչության մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:*

6. Մշակութային և սպորտային օբյեկտների նախագծման և կառուցման աշխատանքների ապահովում:
7. Գյուղմթերքի իրացման գործընթացի ապահովում

3. ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

3.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցեր

- Անբարեկարգ Մշակութային տուն և հարակից տարածք
- Երեխաների համար հանգստի գոտիների բացակայություն
- Կանաչապատ տարածքների բացակայություն
- Խմելու ջրի ոչ բավարար վիճակ
- Կանգառասրահների կահավորվածության ոչ բավարար վիճակ

3.2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցեր

- Շենքերը սնուցող ջրագծերի, անբավարար վիճակ:
- Բնակչությանը մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ:
- Ջրամատակարարման համակարգի անբավարար վիճակ:

3.3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցեր

- Գյուղացիական տնտեսությունների անբավարար վիճակ:
- Տեխնիկայի բացակայություն
- Տոհմային անասնապահության բացակայություն:
- Գյուղմթերքների իրացման և վերամշակման հնարավորությունների բացակայություն:

3.4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցեր

- Համայնքի մանկապարտեզի խաղահրապարակի և հարակից տարածքի հիմնանորոգման անհրաժեշտություն, գույքի, մեթոդական և ծրագրային նյութերի պակաս:
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

3.5. ՄՇԱԿՈՒՅԹ

Մանկական զբոսայգի

- Ծառուղիների անբավարար քանակ:
- Խաղահրապարակի անմխիթար վիճակ:
- Նոր ժամանակակից կարուսելների և ատրակցիոնների պակաս:
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Մշակույթի տուն

Հիմնահարցեր

- Մշակույթի շենքի վերանորոգում
- Գույքի անբավարար վիճակ
- Ջեռուցման բացակայություն
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

3.6. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԱԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Հիմնահարցեր

- Սպորտային խմբակների բացակայություն
- Բուժ.ամբուլատորիայի շենքի անմխիթար վիճակ
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

3.7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Հիմնահարցեր

- Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցման անհրաժեշտություն
- Հաշմանդամների սոցիալական ինտեգրման ծրագրերի ոչ բավարար քանակ:
- Զբաղվածության խնդիրների աստիճանական կարգավորման և գործազրկության մակարդակի նվազում

3.8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնահարցեր

- Կառավարման ապարատի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:
- Բնակչության որոշ մասի անտեղյակություն իր հարկային պարտավորությունների մասին:
- ՏԻՄ-բնակչություն թույլ կապ:

Մշակույթ
(Ոլորտի անվանումը)

Մշակույթի շենքի վերանորոգում , գույքի ձեռք բերում,գրքերի ձեռք բերում գրադարանի համար, համայնքային զբոսայգու բարեկարգում , կանաչ տարածքների վերականգնում, մանկական խաղահրապարակների և բացօդյա սպորտային հրապարակների ստեղծում.տոնական ձևավորման տարրերի ձեռք բերում

(Ծրագրի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը 48000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Վերանորոգում

Ծրագրի հիմնավորումը Դվին համայնքը հարուստ մշակութային ավանդույթներ ունեցող համայնք: Համայնքապետարանը իր գործունեության առաջնայնություններից է համարում մշակութային օբյեկտների նյութատեխնիկական բազայի ամրապնդումը՝ ըստ ամենայնի նպաստելով մշակութային ավանդույթների վերականգնմանը և զարգացմանը:
Մշակույթի տան շենքի հիմնանորոգումն ու գույքի ձեռք բերումը կնպաստեն համայնքի մշակութային ու գիտական կյանքի աշխուժացմանը, երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպմանը, բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:: Հարակից զբոսայգին ևս ենթակա է կանաչապտման և վերականգման:
Անհրաժեշտ է գրադարանը համալրել նոր գույքով և գրքերով: Զբոսայգում կտեղադրվեն խաղահրապարակներ, կստեղծվի բացօդյա սպորտային հրապարակ:
Ծրագրի նպատակները Ծրագրի նպատակն է զարգացնել ու ակտիվացնել համայնքի մշակութային ու գիտական կյանքը: Բարելավել բնակչության ակտիվ հանգստի կազմակերպումը:
Ծրագրի խնդիրները Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

1. Վերանորոգել մշակույթի տան շենքը և ձեռք բերել անհրաժեշտ գույք
2. Գրքերի ձեռք բերում
3. Կից զբոսայգու բարեկարգում, կանաչ տարածքների վերականգնում:
4. Նոր մանկական խաղահրապարակների և բացօդյա սպորտային հրապարակների ստեղծում
5. Համայնքի տոնական ձևավորման տարրերի ձեռք բերում:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Նախահաշիվների կազմում												
2	Գնման գործընթացի կազմակերպում												
3	Մշակույթի տան շենքի վերանորոգում												
4	Կից զբոսայգու բարեկարգում												
5	. Գույքի և գրքերի ձեռք բերում												
6	Համայնքի տոնական ձևավորման տարրերի ձեռք բերում												
7	Արդյունքների գնահատում												

Ծրագրի ակսկալվող արդյունքները Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք հրամանոգված, և ժամանակակից չափանիշներին համապատասխան մշակույթի տուն , բարեկարգված զբոսայգի:

Ծրագրի բյուջեն

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)		15000.0	17000.0	16000.0	48000.0
².	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ					
՛.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ					
1.	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Շենքեր և շինություններ					
	-Շենքերի և շինությունների ձեռք բերում					
	-Շենքերի և շինությունների կառուցում					
	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում		15000.0	17000.0	16000.0	48000.0
1.2	Մեքենաներ և սարքավորումներ					
	-Տրանսպորտային սարքավորումներ					
	-Վարչական սարքավորումներ					
	-Այլ մեքենաներ և սարքավորումներ					
1.3	Այլ հիմնական միջոցներ					
	-Աճեցվող ակտիվներ					
	-Ոչ նյութական հիմնական միջոցներ					
	-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր					
	-Նախագծահետազոտական ծախսեր					
2.	ՊԱՇԱՐՆԵՐ					
	-Համայնքային նշանականության ռազմավարական պաշարներ					
	-Նյութեր և պարագաներ					
	-Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ					
	-Սպառման նպատակով պահվող պաշարներ					
3.	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ					
4.	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ					
	-Հող					
	-Ընդերքային ակտիվներ					
	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ					
	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ					

ՀՀ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		15000.0	17000.0	16000.0	48000.0
1.	Ֆոնդային բյուջեի սեփական եկամուտներ		1000.0	2000.0	2500.0	5500.0
2.	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
	Այլ պետությունների ՏԻՄ-երից					
	Միջազգային կազմակերպություններից					
3.	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
	Պետական բյուջեից նպատակային հատկացումներ					
	ՀՀ այլ համայնքներից պաշտոնական դրամաշնորհներ					
4.	Պետական բյուջեից վարկ					
5.	Առևտրային բանկից վարկ					
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից					
7.	Մասնավոր հատվածի ներդրումներ		10000.0	12000.0	11500.0	33500.0
8.	Բնակչության ներդրումներ					
9.	Այլ		4000.0	3000.0	2000.0	9000.0

Ուղորտային կապիտալ ծրագրի ձև

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն,ջրամատակարարում
(Ուղորտի անվանումը)
Համայնքային հասարակական տրանսպորտի կանգառների կառուցում, արդիականացում, ներհամայնքային ճանապարհների նորոգում

Ծրագրի ընդհանուր արժեքը 9000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Վերանորոգում

Ծրագրի հիմնավորումը Դվին համայքի զարգացմանը նպաստող կարևորագույն խնդիրներից է ներհամայնքային փողոցների, ճանապարհների բարեկարգման , ջրամատակարարման բարելավման /ներքին ցանցի մասնակի վերանորոգում/ աշխատանքների իրականացումը, :

Երկար ժամանակ չնորոգվելու հետևանքով կանգառների կոնստրուկցիաները դեֆորմացվել են, գունաթափվել և դարձել ոչ բարետես: Համայնքում իրականացվել է ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներ, սակայն համայնքում դեռևս առկա են անբարեկարգ և քանդված ճանապարհներ, որը հետիոտնի և ավտոմեքենաների երթևեկության համար թե անհարմար է, և թե վտանգավոր: Համայնքի ջրամատակարարման ներքին ցանցը գտնվում է անմխիթար վիճակում և կարիք ունի վերանորոգման :

Ծրագրի նպատակները Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել համայնքի բարեկարգ և պատշաճ տեսքը, ունենալ մարդկանց և տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար և անվտանգ երթևեկության պայմաններ և լուծել համայնքի բնակչության ջրամատակարարման խնդիրը:

Ծրագրի խնդիրները Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

1. Տրանսպորտի 2 կանգառների վերակառուցում,
2. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
3. Ջրամատակարարման բարելավում /ներքին ցանցի մասնակի վերանորոգում:/

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշիվների կազմում												
2.	Գնման գործընթացի կազմակերպում												
3.	Համայնքային տրանսպորտի 2 կանգառների վերակառուցում,												
4.	Ներհամայնքային ճանապարհների նորոգում												
5 .	Ջրամատակարարման բարեելավում /ներքին ցանցի մասնակի վերանորոգում:/												
6.	Արդյունքների գնահատում												

Ծրագրի սկսվելիք գործունեությունը Ծրագրի իրականացման գործունեությունն կունենան ամրակցած կանգառներ, բարեկարգ փողոցներ և անվտանգ ջրամատակարարում:

Ծրագրի բյուջեն

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)	3000.0	2000.0	2000.0	2000.0	9000.0
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ					
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ					
1.	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Շենքեր և շինություններ					
	-Շենքերի և շինությունների ձեռք բերում					
	-Շենքերի և շինությունների կառուցում					
	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	3000.0	2000.0	2000.0	2000.0	9000.0
1.2	Մեքենաներ և սարքավորումներ					
	-Տրանսպորտային սարքավորումներ					
	-Վարչական սարքավորումներ					
	-Այլ մեքենաներ և սարքավորումներ					
1.3	Այլ հիմնական միջոցներ					
	-Աճեցվող ակտիվներ					
	-Ոչ նյութական հիմնական միջոցներ					
	-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր					
	-Նախագծահետազոտական ծախսեր					
2.	ՊԱՇԱՐՆԵՐ					
	-Համայնքային նշանականության ռազմավարական պաշարներ					
	-Նյութեր և պարագաներ					
	-Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ					
	-Սպառման նպատակով պահվող պաշարներ					
3.	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ					
4.	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ					
	-Հող					

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	3000.0	2000.0	2000.0	2000.0	9000.0
1.	Ֆոնդային բյուջեի սեփական եկամուտներ	2000.0	1000.0	1000.0	1000.0	5000.0
2.	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
	Այլ պետությունների ՏԻՄ-երից					
	Միջազգային կազմակերպություններից					
3.	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
	Պետական բյուջեից նպատակային հատկացումներ					
	ՀՀ այլ համայնքներից պաշտոնական դրամաշնորհներ					
4.	Պետական բյուջեից վարկ					
5.	Առևտրային բանկից վարկ					
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից					
7.	Մասնավոր հատվածի ներդրումներ					
8.	Բնակչության ներդրումներ					
9.	Այլ	1000.0	1000.0	1000.0	1000.0	4000.0

Ոլորտային կապիտալ ծրագրի ձև

Կրթություն, առողջապահություն, արտադպրոցական
(Ոլորտի անվանումը)

Մանկապարտեզի շենքային պայմանների բարելավում , ընդլայնում, կից խաղահրապարակի կանաչապատում և բարեկարգում, անհարժեշտ գույքի և մեթոդական գրականության ձեռք բերում , բուժ.ամբուլատորիայի շենքային պայմանների բարելավում

Ծրագրի ընդհանուր արժեքը 12500.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Վերանորոգում

Ծրագրի հիմնավորումը Համայնքում մեծ ուշադրություն է դարձվում համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների զարգացմանը, պահպանմանն ու դրանց գործունեության պայմանների բարելավմանն ու արդիականացմանը, քանի որ մանկապարտեզ հաճախող երեխաները այլ հանդիսանում են համայնքի ապագան ու վաղվա օրը:

Համայնքնում կա անհրաժեշտություն ընդլայնելու մանկապարտեզի շենքը , համալրել այն նոր գույքով և սարքավորումներով: Այս աշխատանքների իրականացման արդյունքում կբարձրանա երեխաների մշակութային, կրթական, սպորտային և հոգևոր դաստիարակության մակարդակը, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակն ու քանակը: Կարիք կա նաև բարելավելու համայնքի բուժ. ամբուլատորիայի շենքային պայմանները՝ մասնավորապես կառուցել սանհանգույց:

Ծրագրի նպատակները Ծրագրի նպատակն է ապահովել մանկապարտեզ հաճախող երեխաների համար՝ անվտանգ ու ապահով պայմաններ, ունենալ բարեկարգ բուժ. ամբուլատորիա:

Ծրագրի խնդիրները Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝ ընդլայնել մանկապարտեզների շենքը, բարեկարգել կից խաղահրապարակը,կանաչապատել ձեռք բերել գույք և սարքավորումներ, բարելավել բուժ. ամբուլատորիայի շենքային պայմանները:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշիվների կազմում												
2.	Գնման գործընթացի կազմակերպում												
3.	Մանկապարտեզի շենքի ընդլայնում , կից խաղահրապարակի կառուցում, կանաչապատում												
4.	Բուժ.ամբուլատորիայի շենքային պայմանների բարելավում												
5	Գույքի և սարքավորումների ձեռք բերում												
6	Արդյունքների գնահատում												

Ծրագրի ակնկալվող արդյունքները Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք ընդլայնված, նոր գույքով և սարքավորումներով համալրված մանկապարտեզ և բարեկարգված բուժ. ամբուլատորիա:

Ծրագրի բյուջեն

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)	500.0	3400.0	4100.0	4500.0	12500.0
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ					
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ					
1.	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Շենքեր և շինություններ					
	-Շենքերի և շինությունների ձեռք բերում					
	-Շենքերի և շինությունների կառուցում					
	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում		3000.0	3500.0	4000.0	10500.0
1.2	Մեքենաներ և սարքավորումներ					
	-Տրանսպորտային սարքավորումներ					
	-Վարչական սարքավորումներ	500.0	400.0	600.0	500.0	2000.0
	-Այլ մեքենաներ և սարքավորումներ					
1.3	Այլ հիմնական միջոցներ					
	-Աճեցվող ակտիվներ					
	-Ոչ նյութական հիմնական միջոցներ					
	-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր					
	-Նախագծահետազոտական ծախսեր					
2.	ՊԱՇԱՐՆԵՐ					
	-Համայնքային նշանականության ռազմավարական պաշարներ					
	-Նյութեր և պարագաներ					
	-Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ					
	-Սպառման նպատակով պահվող պաշարներ					
3.	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ					
4.	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ					
	-Հող					
	-Ընդերքային ակտիվներ					
	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ					
	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ					

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	500.0	3400.0	4100.0	4500.0	12500.0
1.	Ֆոնդային բյուջեի սեփական եկամուտներ	500.0	1000.0	1100.0	1500.0	4100.0
2.	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
	Այլ պետությունների ՏԻՄ-երից					
	Միջազգային կազմակերպություններից					
3.	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
	Պետական բյուջեից նպատակային հատկացումներ					
	ՀՀ այլ համայնքներից պաշտոնական դրամաշնորհներ					
4.	Պետական բյուջեից վարկ					
5.	Առևտրային բանկից վարկ					
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից					
7.	Մասնավոր հատվածի ներդրումներ		2400.0	3000.0	3000.0	8400.0
8.	Բնակչության ներդրումներ					
9.	Այլ					

Հավելված թիվ 1

Դվին համայնքի ավագանու

2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 22-Ն որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
ԴՎԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

1. Համայնքապետ
2. Համայնքի ղեկավարի տեղակալ
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
4. Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
5. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
6. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
7. Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
8. Համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ
9. Հարկահավաք
10. Հավաքարար
11. Մշակույթի տան վարիչ
12. Գեղմասվար
13. Գրադարանավարուհի

Հավելված թիվ 2

Դվին համայնքի ավագանու

2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 22-Ն որոշման

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Վարչական շենք /համայնքապետարան/
2. Դվին համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ
3. Հուշարձաններ
4. Մշակույթի ակումբներ
5. Պետական ոչ բնակելի տարածքներ
6. Ներհամայնքային նշանակության ճանապարհներ
7. Փողոցային լուսավորության ցանց
8. Բուժ.ամբուլատորիա
9. Փոստի շենք
10. Մսուր N3 բրիգադում
11. Տնակ N5 բրիգադում
12. Տնակ ջերմոցի տարածքում
13. Գերեզմանոցի ասֆալտապատ ճանապարհ
14. Մայր առու, կիսախողովակ
15. Հանգստի գոտի
16. Գրադարանի ֆոնդ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » նոյեմբեր 2016 թվականի թիվ 23-Ն

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, 34-րդ հոդվածի 2-րդ կետով, , «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին որոշում է.

Դվին համայնքի տարածքում 2017 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների ետևյալ դրույքաչափերը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ *7500* դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *15 000* դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *25 000* դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *35 000* դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *50 000* դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *2000* դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *3000* դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ *2000* դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է *2500* դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *3000* դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *5000* դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *8000* դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *13000* դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *30000* դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *70000* դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *3000* դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *5000* դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *8000* դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *13000* դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *30000* դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *70000* դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար *350* դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *150 000* դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական

ապամարկման և մարդկանց ծառայության օբյեկտներում մեկնարկային հարուցման վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *30000* դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *1000* դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *5000* դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *10000* դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *15000* դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *20000* դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *30000* դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *500* դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *1000* դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *2000* դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *5000* դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *10000* դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *15000* դրամ:

5^1. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար՝ *50.000* դրամ

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ *25 000* դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ *50000* դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ *200000* դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ *5000000* դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ *2500000* դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ *100 000* դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *2000* դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *3500* դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ *1000* դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ *0* դրամ:

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

8.2. Եթե արտաքին գովազդ տեղադրող գովազդակրիչը տեղաբաշխվել և տեղադրվել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *1000* դրամ:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի *ԴՎԻՆ* համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *50000* դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *10000* դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *100000* դրամ:

11.2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժզ» կետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *2.500.000* Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *5.000.000* Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *7.000.000* Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *10.000.000* Հայաստանի Հանրապետության դրամ:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու ետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ *2000* դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝ *0* դրամ:

Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի և վճարների իասնական դրույքաչափեր:

Ընթացիկ տարվա համար տեղական տուրքի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետությունում յաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից:

Որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Դվին համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 24-Ն որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Կ.Դավթյան			
Խ.Գրիգորյան			
Գ.Կիրակոսյան			
Վ.Դերմոյան			
Ա.Գրիգորյան			
Գ.Բարեղամյան			

Համայնքի ղեկավար՝ *Ա.Աբրահամյան*

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » նոյեմբեր 2016 թվականի թիվ 24

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ , ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 38-դ հոդվածի 4-րդ կետի 2-րդ մասով, Հայաստանի Հանարապետության Կառավարության 14 հունվարի 2010 թվականի թիվ 16-Ն որոշման III մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության "Հողային օրենսգրքի" 76-րդ հոդվածով

համայնքի ավագանին որոշում է .

համաձայնություն տալ համայնքի՝ Ուրց-Կոտայք-Շամիրամ գոտու՝ 03-040-0553-0007 ծածկագրի տակ տնվող 423.94592 հա ընդհանուր մակերեսով , համայնքի վարչական սահմաններում գտնվող , պետական եփականություն հանդիսացող գյուղատնտեսական, ջրային նշանակության՝ գյուղատնտեսական այլ 98.89323 հա/, արոտավայր /324.21379 հա/, ջրային /0.8389 հա/ հողատեսքերը /Վկայական N 08112016-3-0020/ վարձակալությամբ տրամադրմանը՝ անասունների արածեցման նպատակով:

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Կ.Դավթյան			
Խ.Գրիգորյան			
Գ.Կիրակոսյան			
Ա.Գրիգորյան			
Վ.Դերմոյան			
Գ.Բարեղամյան			

Համայնքի ղեկավար՝ *Ա.Աբրահամյան*